ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԻՑ և ՍԵՌԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ



ԼԱՆԶԱՐՈՏԵԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Երեխաներին
սեռական բռնությունից
պաշտպանելու
համաշխարհային գործիք

Կառուցե՛նք
Եվրոպա՝
երեխաների համար
և երեխաների
հետ միասին

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

Սեռական շահագործումը և սեռական բռնությունը երեխաների նկատմամբ բռնության վատթարագույն ձևերից են: Հաշվարկային տվյալներով՝ Եվրոպայում հինգ երեխաներից մոտավորապես մեկը տուժել է սեռական բռնության այս կամ այն ձևից, և դեպքերի 80%-ում բռնարարը երեխային ծանոթ մեկն է: Սեռական բռնությունն ընդդեմ երեխաների կարող է տարբեր ձևեր ունենալ, մասնավորապես՝ սեռական չարաշահում ընտանիքի ներսում կամ վստահված անձանց շրջանում, սեռական շահագործում մարմնավաճառության կամ սեռական չարաշահման նյութերի միջոցով, սեռական բռնություն ինտերնետի օգտագործմամբ և սեռական ոտնձգություններ հասակակիցների կողմից:

Երեխաների սեռական շահագործումը և չարաշահումը 1990-ականներից սկսած աստիճանաբար ավելի մեծ ուշադրության են արժանացել: Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 34-րդ հոդվածով նախատեսվում է բռնության այս տեսակից երեխաներին պաշտպանելու՝ պետության պարտավորությունը: 2000 թվականին Երեխաների վաճառքի, մանկական մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրությամբ էլ ավելի բարելավվեց երեխաների իրավական պաշտպանությունը սեռական բռնությունից՝ իրավական մեկ ամբողջական փաստաթուղթ նվիրելով նշված հանցագործությունների կանխարգելմանը և դրանցից պաշտպանությանը:

Լանզարոտեի կոնվենցիան տարածաշրջանային առաջին միջազգային պայմանագիրն է, որը նվիրված է մասնավորապես սեռական բռնությունից երեխաների պաշտպանությանը: Կոնվենցիան, որն ընդունվել է Իսպանիայի Լանզարոտե քաղաքում 2007 թվականին, ուժի մեջ է մտել 2010 թվականին: Այն ստորագրվել է Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների կողմից:

Լանզարոտեի կոնվենցիայով նախատեսված հանցագործություններն արտացոլում են ձևավորված նվազագույն կոնսենսուսը, այսինքն՝ խրախուսվում է առանձին պետության ներպետական իրավական համակարգում ավելի բարձր չափանիշների սահմանումը: Այսօրինակ ներդաշնակեցումը մի շարք օգուտներ է բերում ներպետական և միջազգային մակարդակներում երեխաների դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարում, ինչպիսիք են, մասնավորապես.

- Նվազեցնել այն ռիսկը, որ հանցագործները կարող են նախընտրել՝ հանցավոր արարքները կատարել այնպիսի մասնակից պետության տարածքում, որի կանոններն ավելի մեղմ են,
- Ավելացնել տվյալների համեմատելիությունը ներպետական և միջազգային մակարդակներում, և
- Օգնել միջազգային համագործակցությանը:

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԲԵԿՈՒՄՆԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լանզարոտեի կոնվենցիան էական քայլ է երեխաների նկատմամբ սեռական հանցագործությունների կանխարգելման, հանցագործների քրեական հետապնդման և տուժող երեխաների պաշտպանության ուղղությամբ: Հենվելով գոյություն ունեցող միջազգային և տարածաշրջանային իրավական չափանիշների վրա՝ Կոնվենցիան ընդլայնում է դրանց շրջանակը, որպեսզի դրանք ընդգրկեն և քրեականացնեն երեխաների դեմ ուղղված բոլոր սեռական հանցագործությունները՝ անկախ դրանց առևտրային շահույթի ստանալու նպատակով կամ առանց այդպիսի նպատակի կատարելու հանգամանքից:

Այս կոնվենցիայի բուն խնդիրը երեխաներին պաշտպանելն է: Կոնվենցիան հիմնականում վերաբերում է երեխաների իրավունքների հարգմանը, նրանց բարօրության ապահովմանը, նրանց կարծիքները, կարիքները և մտահոգություններն հաշվի առնելուն և բոլոր գործողություններում մշտապես երեխայի լավագույն շահերով առաջնորդվելուն:

Լանզարոտեի կոնվենցիան պետություններից պահանջում է ապահովել ֆորմալ կամ ոչ ֆորմալ պայմաններում տեղեկատվության տրամադրումը՝ երեխաներին կրթելով սեռական շահագործման և սեռական չարաշահման ռիսկերի մասին, և թե ինչպես կարող են երեխաները պաշտպանվել և դիմել օգնության:

Լանզարոտեի կոնվենցիան միջազգային առաջին իրավական փաստաթուղթն է, որով պահանջվում է քրեականացնել սեռական նպատակի համար երեխաների հետ կապ հաստատելը («սիրահետելը»): Այս քրեական հանցագործության տարածվածությունը՝ պայմանավորված նաև տեղեկատվության և հաղորդակցության տեխնոլոգիաներով (ՏՀՏ-ներ), սրընթաց կերպով աճել է վերջին տասնամյակում, և Լանզարոտեի կոնվենցիան կարևորագույն գործիք է, որը պետություններին պարտավորեցնում է երեխաներին պաշտպանել սեռական բռնության այս ձևից և քրեական հետապնդում իրականացնել հանցագործների նկատմամբ:

Հաշվի առնելով երեխաների դեմ ուղղված սեռական հանցագործությունների անդրազգային բնույթը՝ Լանզարոտեի կոնվենցիան ներառում է «արտատարածքայնության սկզբունքը», այսինքն՝ կոնվենցիայի մասնակից մեկ պետության քաղաքացիները կամ բնակիչները կարող են որոշ հանցագործությունների համար քրեական հետապնդման ենթարկվել անգամ այն դեպքում, երբ արարքը կատարվել է արտերկրում:

Լանզարոտեի կոնվենցիան պետություններին քաջալերում է մշակել համապատասխան ծրագրեր կամ միջոցառումներ՝ ուղղված սեռական հանցագործներին, որպեսզի կանխվի կրկնահանցագործությունների կատարումը երեխաների նկատմամբ: Ցանկացած նման միջամտություն կարող է չսահմանափակվել պատիժների քրեական համակարգով, այլ կարող է նաև առողջապահության և սոցիալական պաշտպանության համակարգերի շրջանակում:

Լանզարոտեի կոնվենցիայով սահմանվում են միասնական չափանիշներ, որոնցով պետք է ապահովվի արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ քրեաիրավական դաշտի ձևավորումը բոլոր պետություններում: Կարևոր է, մասնավորապես, այն հանգամանքը, որ պետությունները Կոնվենցիայի համաձայն պարտավոր են երկարացնել երեխաների դեմ ուղղված սեռական հանցագործությունների համար սահմանված վաղեմության ժամկետները, որպեսզի քրեական վարույթ հնարավոր լինի հարուցել տուժողի՝ չափահասության տարիքի հասնելուց հետո:

Ի՞ՆՉ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ Է ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Լանզարոտեի կոնվենցիան պետություններից պահանջում է ամբողջական մոտեցում ցուցաբերել երեխաների դեմ ուղղված սեռական բռնության նկատմամբ, մասնավորապես՝ պահպանելով չորս սկզբունքներ. կանխարգելում, պաշտպանություն, քրեական հետապնդում և ներպետական ու միջազգային համագործակցության խթանում:

Կանխարգելումը

- Երեխաները պետք է տեղեկացվեն սեռական շահագործման և սեռական չարաշահման ռիսկերի մասին և պետք է զինվեն իրենց պաշտպանելու համար անհրաժեշտ հնարավորություններով,
- Երեխաների հետ անմիջականորեն աշխատող անձինք պետք է հատուկ ստուգումներ և վերապատրաստումներ անցնեն,
- Սեռական հանցագործություն կատարած անձանց համար (թե՛ դատապարտված, թե՛ դատապարտվելու հավանականություն ունեցող) նախատեսված ծրագրերը կամ միջոցառումները պետք է կանոնավոր մշտադիտարկման ենթարկվեն:

Պաշտպանությունը

- Պետք է քաջալերել, որպեսզի անձինք հաղորդում ներկայացնեն սեռական շահագործման կամ սեռական չարաշահման ցանկացած կասկածի դեպքում
- Պետք է ստեղծել հեռախոսային և ինտերնետային թեժ գծեր
- Պետք է ստեղծել ծրագրեր, որոնց շրջանակում աջակցություն կցուցաբերվի տուժողներին և նրանց ընտանիքներին
- Պետք է տրամադրել թերապևտիկ աջակցություն և հրատապ հոգեբանական խնամք
- Պետք է ներդնել երեխայանպաստ դատական վարույթներ տուժողի անվտանգությունը, անձնական կյանքը, ինքնությունը և հեղինակությունը պաշտպանելու նպատակով: Կարևոր է, մասնավորապես, որպեսզի տուժող երեխաների հետ հարցազրույցների թիվը սահմանափակված լինի. հարցազրույցը պետք է անցկացնել հավատ ներշնչող վայրում՝ հենց տվյալ նպատակի համար հատուկ վերապատրաստում անցած մասնագետների մասնակցությամբ:

Քրեական հետապնդումը

Լանզարոտեի կոնվենցիայով սահմանվում է, որ Կոնվենցիային մասնակցող բոլոր պետություններում պետք է քրեականացվեն հետևյալ գործողությունները.

Երեխայի սեռական չարաշահումը

Ներառում է երեխայի հետ չափահաս անձի կողմից կատարվող սեռական գործողությունները: Անգամ եթե երեխան հասել է սեռական չափահասության՝ ներպետական օրենսդրությամբ սահմանված տարիքին, դա միևնույն է սեռական չարաշահում է, եթե մեծահասակն օգտագործում է հարկադրանք, ուժ կամ սպառնալիքներ, կամ եթե մեծահասակը չարաշահում է վստահության, իշխանության կամ ազդեցության իր դիրքը, կամ օգտվում է երեխայի՝ հատկապես խոցելի լինելու հանգամանքից:

Մանկական մարմնավաճառությունը. սեռական շահագործումը մարմնավաճառության միջոցով

Ներառում է սեռական շահագործման այն ձևերը, որոնց շրջանակում երեխային հավաքագրում, հարկադրում կամ դրդում են մասնակցել մարմնավաճառության՝ փողի կամ որևէ տեսակի վարձատրության կամ օգուտի այլ ձևի (կամ դրա խոստման) դիմաց:

Մանկական պոռնոգրաֆիան. երեխայի սեռական չարաշահման նյութերը

Ցանկացած նյութ, որում երևում է իրական կամ նմանակված սեռական անպարկեշտ գործողության մասնակցող երեխա, կամ՝ երբ հիմնականում սեռական նպատակների համար ներկայացվում են երեխայի սեռական օրգանները: Քրեական այս հանցագործությունը կարող է կատարվել՝ պատրաստելով նման նյութեր, առաջարկելով կամ հասանելի դարձնելով դրանք, տարածելով կամ ուղարկելով դրանք, գնելով դրանք սեփական անձի կամ մեկ այլ անձի համար, տիրապետելով դրանք և գիտակցաբար ձեռք բերելով դրանց հասանելիությունը:

Երեխայի մասնակցությունը պոռնոգրաֆիկ ցուցադրությունների մեջ. երեխայի շահագործումը սեռական ցուցադրություններում

Քրեական այս հանցագործությունը ներառում է սեռական ցուցադրության մասնակցելու նպատակով երեխային հավաքագրելը, հարկադրելը կամ դրդելը, կամ՝ այդպիսի ցուցադրություններին երեխայի մասնակցությունից որևէ այլ կերպ օգուտ քաղելը: Այն ներառում է նաև ներկա գտնվելը երեխաների մասնակցությամբ տեղի ունեցող նման ցուցադրություններին՝ դրանց մասին իմանալով:

Երեխաներին փչացնելը

Վերաբերում է այն դեպքին, երբ սեռական չափահասության տարիքի չհասած երեխան այլ անձի գործողությունների պատճառով ականատես է լինում որևէ սեռական գործողության: Դա չի նշանակում, թե երեխան պետք է մասնակցի սեռական գործողությանը: Երեխային այդ գործողություններին ականատես դարձնելու փաստն ինքնին պետք է քրեականացնել:

Սեռական նպատակներով երեխաների հետ կապ հաստատելը

Քրեական այս հանցագործությունը, որը հայտնի է նաև «սիրահետել» անվանումով, ներառում է չափահաս անձի դիտավորյալ գործողությունը, որով նա հանդիպել է առաջարկում երեխային, ով դեռևս չի հասել սեռական չափահասության տարիքի՝ նրան սեռական չարաշահման կամ շահագործման ենթարկելու նպատակով: Լանզարոտեի կոնվենցիան անդրադառնում է մասնավորապես այն առաջարկներին, որոնք արվում են տեղեկատվության և հաղորդակցության տեխնոլոգիաների միջոցով, ինչպես նաև այն իրավիճակներին, որոնցում հանցագործը որոշ կոնկրետ քայլեր է կատարել երեխային անձամբ հանդիպելու ուղղությամբ: Այնուհանդերձ, Լանզարոտեի հանձնաժողովը, որն օժտված է Կոնվենցիան մեկնաբանելու լիազորությամբ, առաջարկել է, որպեսզի պետությունները դիտարկեն նաև այն դեպքերի քրեականացման հնարավորությունը, որոնցում սեռական չարաշահումը ոչ թե անձամբ հանդիպելու հետևանք է, այլև՝ կատարվում է բացառապես համացանցում:

Ներպետական ու միջազգային համագործակցության խթանումը

Կոնվենցիան ներպետական մակարդակում ընդգծում է արդյունավետ, համակարգված և համապարփակ միասնական համապետական քաղաքականություններ ընդունելու և իրագործելու կարևորությունը:

Միջազգային մակարդակում համագործակցությունն օգնում է պետություններին գտնել և վերլուծել հիմնախնդիրները, գտնել և կիրառել միասնական լուծումներ, տվյալներ և փորձ փոխանակել, պայքարել անպատժելիության դեմ և բարելավել կանխարգելման և պաշտպանության մեխանիզմները:

Լանզարոտեի կոնվենցիայի կատարման մշտադիտարկումը

Կոնվենցիայի մասնակից պետությունների հանձնաժողովը, որը հայտնի է նաև որպես Լանզարոտեի հանձնաժողով, հատուկ մարմին է, որը ստեղծվել է մշտադիտարկելու համար, թե ինչպես են Կոնվենցիային մասնակցող պետություններն իրենց օրենսդրության և քաղաքականության մեջ արդյունավետորեն ներդնում Կոնվենցիան:

Մշտադիտարկման ընթացակարգը բաժանված է շրջափուլերի, որոնցից յուրաքանչյուրը վերաբերում է թեմատիկ կոնկրետ ոլորտի, ընդ որում՝ կոնկրետ շրջափուլի ընթացքում միաժամանակ մշտադիտարկվում են մասնակցող բոլոր պետությունները: Այդպիսի մշտադիտարկման նպատակն է բոլոր պետություններում որոշակի ուշադրություն սևեռել Լանզարոտեի կոնվենցիայով նախատեսված կոնկրետ թեմատիկ խնդրի ուղղությամբ, որն իր հերթին կնպաստի հաջողված փորձի փոխանակմանը և հնարավոր կդարձնի պետությունների գործող օրենսդրության կամ քաղաքականության մեջ բացերի կամ դժվարությունների հայտնաբերումը: Հանձնաժողովն այսկերպ համեմատական պատկերացում է կազմում Կոնվենցիային մասնակցող բոլոր պետություններում տիրող իրավիճակի մասին:

Լանզարոտեի հանձնաժողովի լիազորությունները ներառում են նաև աջակցությունը տեղեկությունների, փորձի և հաջողված օրինակների հավաքագրմանը, վերլուծությանը և փոխանակմանը պետությունների միջև, որը թույլ կտա բարելավել երեխաների սեռական շահագործման և սեռական չարաշահման կանխարգելման և դրանց դեմ պայքարի՝ պետությունների կարողությունները: Այդ գործընթացում Լանզարոտեի հանձնաժողովն հարաբերվում է քաղաքացիական հասարակության և վերաբերելի այլ շահակիցների հետ՝ կարողությունների զարգացման լայն և փոխակտիվ հարթակի դեր կատարելով հանձնաժողովի բոլոր մասնակիցների համար:



ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Է ԼԱՆԶԱՐՈՏԵԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ ԱՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ՈՐՈՆՔ ՉԵՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒՄ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻՆ

Երեխաների նկատմամբ սեռական բռնությունն համաշխարհային երևույթ է: Լանզարոտեի կոնվենցիան գրվել է այն ընկալմամբ, որ համաշխարհային այս երևույթի դեմ իրականացվող միջոցառումները չպետք է սահմանափակվեն կոնկրետ աշխարհագրական տարածքով: Ուստի, Կոնվենցիային իրավունք ունի միանալ աշխարհի ցանկացած պետություն:

Որպես երեխաների դեմ ուղղված սեռական բռնության բոլոր ձևերի դեմ պայքարի համընդգրկուն ներպետական մեխանիզմի գործունեությունը կարգավորող համապարփակ գործիք, Լանզարոտեի կոնվենցիան ուղղորդող և ոգեշնչող նշանակություն ունի աշխարհի բոլոր այն կառավարությունների համար, որոնք ցանկանում են պայքարել այս ծանր խնդրի դեմ՝ բարելավելով իրենց իրավական դաշտը:

Կոնվենցիան նաև լուրջ հիմքեր է ընձեռում քաղաքացիական հասարակության և վերաբերելի այլ շահակիցների կողմից ջատագովություն իրականացնելու համար, որպեսզի նրանք պահանջեն բարելավել երեխաների դեմ ուղղված սեռական բռնության բոլոր ձևերի դեմ պայքարի՝ կառավարության կողմից իրականացվող միջոցառումները:

Լանզարոտեի կոնվենցիայի իրագործումը կնպաստի ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների շրջանակում աշխարհի առաջնորդների ստանձնած բեկումնային այն հանձնառության կատարմանը, որի համաձայն 2030 թվականի դրությամբ պետք է վերջ դնել երեխաների չարաշահմանը, շահագործմանը, թրաֆիքինգին, նրանց դեմ գործադրվող բոլոր տեսակի բռնություններին և խոշտանգումներին:

Երեխաների իրավունքները Եվրոպայի խորհրդում.
► **www.coe.int/children**
Հարցերի համար դիմել.
► **children@coe.int**

Լանզարոտեի կոնվենցիայի կայքէջը.
► **www.coe.int/children/lanzarote**
Հարցերի համար դիմել.
► **lanzarote.committee@coe.int**

Եվրոպայի խորհուրդը երախտագիտությամբ հիշատակում է «Երեխաների նկատմամբ բռնության վերացման հիմադրամի» («Fund to End Violence Against Children») կողմից սույն ծրագրին տրամադրած ֆինանսական աջակցությունը:

End Violence Against Children
THE FUND

Prems 095719 – Photos: Shutterstock, Council of Europe,
Cover photo: ©Zev Hoover

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, որոնցից 28-ը միաժամանակ նաև Եվրոպական միության անդամներ են: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը նպատակաուղղված միջազգային համաձայնագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE